Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 08. ԱՊՐԻԼԻ 2015 Թ> ԹԻՎ 96-Լ ՀՐԱՄԱՆԻՑ

ՉՇԽՈՂ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի հանրապետությունում ծխելու դեմ պայքարի 2010-2015 թվականների պետական ծրագիրը և ծրագրի կատարումն ապահովող առաջնահերթ միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 475-Ն որոշմամբ հաստատված պետական ծրագրի դրույթները և ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պետերին՝

- քրեակատարողական օրենսդրությամբ ամրագրված իրավական սահմանափակումների բացակայության պարագայում կալանավորված անձանց կամ դատապարտյալների ըստ խցերի (կացարանների) տեղաբաշխման գործողությունները հնարավորինս կազմակերպել այնպես, որ

նվազագույնի հասցվեն չծխող անձանց ծխողների հետ միևնույն խցում (կացարանում) պահելու դեպքերը,

- տեղաբաշխման հարցը քննարկելիս՝ խնդրո առակաների շարքում պարտադիր ընդգրկել նաև կալանավորված անձի կամ դատապարտյալի ծխելու հանգամանքը՝ այդ մասին նշելով տեղաբաշխման որոշման մեջ:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Քրեակատարողական վարչության պետի առաջին տեղակալ, արդարադատության գեներալ-մայոր Ռ.Հովհաննիսյանին և վարչության պետի տեղակալ, արդարադատության փոխգնդապետ Ա.Համբարձումյանին:

3. Հրամանը ծանոթացնել Քրեակատարողական վարչության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և քրեակատարողական հիմնարկների պետերին:

4. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ԱՐԹՈՒՐ ՕՍԻԿՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ОБЩИЙ ОТДЕЛ